



R. P. Kalemecarian, Mochiharistengasse W 4 (Austria)

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար

Տարեկան	12 ծր.
Վեցամսեայ	6 "

Անաստասիանի համար

Տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Անեթիկայի համար

Տարեկան	3 ծր.
Վեցամսեայ	1.50 "

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ

Պատկերներու սուր առաջին հրատարակչի համար 40 սանթիմ. ե. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. ե. երեսին առջին անգամուհետ համար 20 Ս. զեղ կրկնայ.

Վառնայի համար ձեռք 10 u.

ՇԱՐՄԱՅ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Ը ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐՄԱՅԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՐԻՆԸ ՊԵՏԲ Է ԿԱՆԻՍԻ ԿՃԱՐՆԵ

Պուշկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Redaction du journal «Charjoun» Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգապիտ մեր նախորդ աղբերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու անունները պիտի յայտարարուի Շարժումի մէջ։ Գտնուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ։ Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը տրուի մինչեւ դեկտ. 15ը։ Մինչեւ այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի հրատարակենք։

Հերոսներ կան լեռներդ 'ի վեր անձնուէր,
Թուր արծուի սէզ սլացքով անոնց քով,
Ու փրփրէ թող քու հոգին մողզին,
Թո՛ղ որոտայ զէնքէդ բողբ անողբ,
Թո՛ղ հոսի խօ՛ւ կարմիր հեղեղ խելայել,
Եւ պիտ' ազգէ ահ ամենուն քու անուն.

Բա՛ւ է տունդ տեղդ ցան ցիր տոկացիր,
Սրտիդ տիրած բռնաւորին վախ խորին,
Բա՛ւ է շրթայ, բանա ու կապանք, տատապանք,
Գրկէ՛ զէնքը ե. արշաւէ ա՛լ բաւ է :
ՎԷՏԱ
30 հոկտ. Վառնա

Գրեթէ չորս երկար ամիսներ թուրքիան, նիրքնապէս խարխուռ քայքայված, յարաբար էր զօրաւոր հասարակագետութեան դէմ. սակայն ազատութեան ուղիի մէջ մտած ոչ մի ժողովուրդ, ոչ մակեդոնացիները և ոչ էլ հայերս կարողացանք ներքին ապստամբական փոթորիկը բարցնալը։ Մենք աշխատեցինք կրկին գրով, մտաւոր հանգամանքից օգտվել, առանց մշտաճիւղ որ գրիչը եւ թուղթը բաւական չեն ամենամարդասէր աղբին, ամենաբարի և կորովի օտար դիւանագէտին տանջվող մուրացող ստրուկին քրականապէս պաշտպան դարձնելու։

Ուրեմն անցաւ և մի ամենաշարժար, ամենաշատը ըստ է կրկին մեր հասարակութեան մեր դիւանագէտների, մեր՝ զանազան հոսանքների մէջ տարբերփող յեղափոխականների համար աւելացաւ մի փաստ, թէ հայկական հարցի լուծումը, հայ ժողջաւերի վերջը կայտնած է միմիայն հայի դաշոյնի ծայրից և հրացանի դնտակից։

Երբեք այս դառն դասից պէտք է օգտվեն մեր ժողովրդի բոլոր խաւերը. արդեօք պէտք է վերջնականապէս ըմբռնենք թէ մեզ միայն մնում է ապստամբութեան միջոցը։ Կատարել, բուն, ապստամբութիւնը։

Մենք չենք առաջարկում խենթ գործեր, այլ առաջարկում ենք եռանդով արագ պատրաստութիւն որովհետեւ թուրքիան այնպիսի մի կառավարութիւն է որ Պրանսոյի հետ ունեցած վէճի նման վէճ ամէն օր կարող է պատահել։ Թող մեր դիւանագէտները իրենց ընտրած միջոցով գործեն, թո՛ղ նրանք եւրոպայի հասարակական կարծիքը պատրաստեն, բայց յեղափոխական մարմիններն էլ թող իրենց գործով վարվին։

Սրովհետեւ վերջապէս գրանք պէտք է համովված լինեն, թէ առանց հայկական ապստամբութեան, ոչ մի դիւանագէտ և ոչ

ամենանուրբ դիւանագիտութիւն կարող են հայ ժողովրդի անտանելի վիճակը գտնէ մի քիչ բարելաւել։

ՎԱՐԴՕ

ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Ճիշդիպէի Մակ. Կոմիտէն գովելի գաղափարը յղացած էր Մակեդոնիոյ մէջ յեղ. բանտարկեալներու ինպաստ ներկայացում մը տալու։

Հոկտ. 25ի իրիկունը տեղի ունեցաւ ներկայացումը։ Վերջապէս Մակեդոնիոյ թատրոնը խուռն բազմութեամբ լեցուած էր։ Գերակատարները բոլորն ալ—ուրբ տասը հատը օրիորդներ—յաջող էին իրենց դերերուն մէջ։

Մակայն ներկայացումին վրայ չէ որ կուզեմ գրել. անոր նպատակն է որ կրկին յիշողութիւններ կարթընցնեն մտքիս մէջ — ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ։

Պուշկարները կը մտածեն Մակեդոնիոյ բանտարկեալներուն վրայ մենք ի՞նչ կընենք։

Հէզ հայ բանտարկեալը, անդին, շղթայակապ, առտուրէն մինչեւ իրիկուն, զինքը պարփակող ճագերուն առջեւ կը դեգերի, տրտուած, յուսահուր, ենթարկուած միշտ թուրք զափթեաններուն նախատանքին։ Անոր աչքը միշտ ճամբան է, օգնութիւն մը կակնկալէ։ Ու ամէն անգամ որ ատ օգնութիւնը չհասնի անոր, կըսէ ինքնիրեն—ապերախաներ... Խեղճ հայ բանտարկեալ...։

Հայ ժողովուրդը չի տուաւ անոր իր կողմին համար պէտք եղած բաւական պաշարը—զէնք, փամփուշտ։ Հայ ժողովուրդը չի տուաւ անոր նիւթական ու բարոյական այն ուժը՝ ա՛լ աւելի յաջող դուրս գալու համար յեղափոխականը իր ձեռնարկներէն։ Ան մնաց միս միսակ թշնամիին դէմ, համրուած փամփուշտներով, անբաւական պաշարով. ու կրցաւ նորէն շատ անգամներ ճողապրիլ այնքան վտանգներէ։

Ան իր կուրծքը թշնամիին գրնդակներուն դէմ տալէն ետքը քաջաբար, իր կեանքը վտանգներու ենթարկելէ ետքը, օրին մէկը, իր կամքէն բոլորովին անկախ, դժբաղդութիւնը ունեցած է չի մտնելու այլ... թշնամիին ճանկը ինչպիսի...։

Ու այսօր անիկա բանտերու խորը մշտական տառապանքներու, անլուրջարջարանքներու ենթարկուած, կը

ՀԱՅ ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ

Բա՛ւ է տունդ տեղդ ցան ցիր տոկացիր,
Սրտիդ տիրած բռնաւորին վախ խորին,
Շէն երկիրդ դարձուց կրակ աւերակ,
Եւ դուն խոնարհ տարիք քու վիշտ լուիկ միշտ։

Ծագկեցուցիր յար անդադար դարէ դար,
Հերկելով հեզ ու բարեպաշտ արտ ու դաշտ,
Սակայն միթէ՞ անցաւ մտքէդ, պահ մը գէթ,
Թէ կը մնաս մի օր աւա՛ղ անսուտը։

Պահեցիր ծով, պահք լիուլի անյիզի,
Հողիդ կառչած անխախտ վերին պատուէրին.
Սիրեցիր խաչ, աղօթք ու ժամ յարածամ,
Բայց թէ՛ քեզ թէ՛ եկեղեցին այրեցին։

Մոռցիր դուն ալ խաչ ու արօր գէթ մի օր,
Եւ ա՛ռ ընկեր քեզ ուսմբ դաժան անբաժան.

ՎԵՐՋԱՑԱԻ

Այս խօսքով է սկսում «Թան» Պրանս թուրքական վէճի վերջացման առթիւ հրատարակած իր յօդուածը։

Այս, վերջացաւ Պրանս—թուրքական վէճը։ Ինչպէս որ նախատեսել էինք, Սուլթանը Պրանսական նաւատորմիկի հարաւանելու պէս, իր հպատակներին հանդէպ ունեցած զոռուութեան չափով ստրկացած կատարեց Պրանսոյի բոլոր պահանջները, և Պրանսոյի նաւատորմիկը միայն իր երկրի շահերը պաշտպանելուց յետոյ, առանց մի թնդանօթ պայթեցնելու արգէն վերադարձել է իր տեղը։

Քաղաքական աշխարհի լարված ու շաղթութիւնը, թուրքիայի բռնութեան տակ զոհվող, տանջվող քրիստոնէանների յոյսերը միակնթարթում օգը ցնդեցին։ Թուրքիան այս անգամ էլ օձիքը ազատեց զօրաւոր հակառակորդի ձեռքից, բայց հաւանական է որ իր ձեռքում սեղմվող զեպուրները վիզը աւելի եւս պինդ պէտք է սեղմի։

հիւժի, տասն անգամ մահը կը փնտ-
ռէ. ու չը գտնէր: Գոնէ ուտելու.
հէլալ բրդուճ մը հաց ունենար, իր
ատած ու կուած թշնամիին պատու
մը գարի-հացին կարօտ չըլլալու հա-
մար, որու բախումին կը սպասէ ճա-
րահատ. . . զիտնալով որ իր վեհանձ-
նութեան, -իր գիտակցութեան ա-
մենէն ծանր հարուած մըն է ատ:
Յեղափոխականը մինակ էր եւ ա-
նօղնական կուռի դաշտին վրայ, իր
ձեռնարկներուն մէջ, երեսի վրայ
մնացած է այսօր բանտին խորը, ա-
նօթի ծարաւ: Անոր ծով ցաւերուն-
ծով պէտքերուն, գոնէ աննշան թող
ըլլայ-դարման չի տարուիր:
Բանտին մէջ ալ իր վրայ չի մտածեր
զինքը ծնող ապերախ ժողովուրդը:
Ամօթ անոր. . .

«Թո՛ղ միանան յեղափոխականները
որ գրամ տանք» ըսին քանի մը զի-
մակաւոր շարլաթաններ, «չէ՞գո՞ք»
անուշին տակ կ'ըզուող անտարբեր-
ները քաջալերելու համար, բայց
միշտ ժողովրդին բերնէն, ու ասիկա
ոչ թէ չի նկատու, այլ քանդակու եւ ի-
րենց դաւաճան անգործութիւնն ու
անտարբերութիւնը պարտկելու հա-
մար:

Անդին բուն գործող յեղափոխականը
իրեն ընձեռուած միջոցները ներածին
ափով, կաշխատէր, կը շարունակէր
իր գործը առանց վայրկեան մը սպա-
սելու երեւակայութեամբ միտքեան:

Ան հայ բանտարկեալը, իր բո-
վանդակ խեղճութեամբ ատ դիմակա-
ւոր շարլաթաններուն ու շոշորթ-
ներուն առջեւ ցցուած — ի՞նչ ըրին
ու կընեն անոնք հայ բանտարկեալ-
եալին համար:

Բայց ձգենք դիմակաւոր շարլա-
թաններն ու անարբերները՝ իրենց
դաւաճանութեան մէջ: Ձգենք հայ
հարուստը, ջոջը, որ իր փափուկ ու
տաքուկ գորգերուն մէջ պլլուած, զը-
թէն ու բերնէն դարու չափ ուսէ ու
խմէ համադրամները եւ փարթը չփէ,
վայրկենական հաճոյքներու, «պալօ»-
ներու կամ «աւլօն»ներու համար բա-
նայ անատրէն իր քօակը. յեղափո-
խական ձեռնարկներու համար գառնա-
լով ժլատ հրէջ մը: Ձգենք «կայանթ»
միւսիւնները, որոնք «չանթան»նե-
րու անկիւնը, «պիւրա»ներու վրայ
կանցնեն ժամանակին, «կապրին»
ուտելու համար», չմտնալով դուրսն
ալ ինքզինքնին զոհողութիւն չընող
խոհեմ յեղափոխական ծախել: Ձգենք
վերջապէս ամէն անոնք, որոնցմէ
կրնայ օգտուիլ բանտարկեալը իր
մահէն ետք, յեղափոխութիւնը իրեն

այլեւս պէտք չզգացուելէն ետք. . .
Ամօթ ատ ամեն ուն ալ. . .
Ի՞նչ կընէ սակայն աշխատելու եւ
օգտակար դառնալու տրամադրութիւն
ցոյց տուող քիչ թէ շատ զաղափար-
րուած երիտասարդութիւնը, որ իր
հետ ունի ժողովրդին զգացում ունե-
ցող դասակարգին կարեւոր մէկ մասին
համակրանքը: Ի՞նչ կը մտածէ ան,
ի՞նչ միջոցներու դիմած է, ի՞նչ ճիգ
թափած է սրբելու համար հայ բան-
տարկեալին արցունքը, միաժամանակ
քիչ մըն ալ թեթեւցուցած քլլալու
համար յեղափոխութեան վրայէն կա-
րեւոր բնու մը:

— Դժբաղդաբար մինչեւ հիմա զեռ
ոչինչ. . .

Դրօշակը իր տասնամեակի թիւով,
մեկնող եւ նահատակուող յեղափոխա-
կաններու քովիկը, իրական գոյնե-
րով պատկերացուց բանտերու, առ-
ժամանակեայ կամ ժամանակաւոր
կերպով կուռի դաշտէն հեռացողներու
կենդանի նահատակութիւնը: Ու
Հայկական կարմիր խաչի մը
գոյութեան անհրաժեշտութիւնը շեշ-
տեց ան: Շարժուիլն ալ անոր արձա-
գանքը եղաւ:

Տպաւորութիւնը որ թողուց աս
կոչը իր ատենին երիտասարդութեան
վրայ, բաւական ազդու եւ միւլիթա-
րական էր: Աղետորտներ, ճգիւտեղան
որքան դիտեմ, երիտասարդութեան
մէջ, սակայն զժբաղդաբար, կարծես
չուտով մարեցաւ ետանդը, առանց
գործնական արդիւնք մը արտադրե-
լու:

Բայց պատասխանատուութեան
լայն բաժին մը կը ծանրանայ երի-
տասարդութեան վրայ, ցորչափ չընէ
գործ մը ուրկէ պիչ թէ շատ օգտուի
հայ բանտարկեալը: Եթէ շատը չենք
կրնար, գոնէ քիչը կրնանք ընել:

Հայ բանտարկեալը անօթի է մէկ
խօսքով:

Ճիլիպէի պուկար յեղ. ձեռնարկը
օրինակելի է:

Ճիլիպէն եւ ինչպէս կը լսեմ Վառ-
նան, մասնաւորապէս Ռուստուզը՝
ուրին երիտասարդութիւն մը որ կր-
նան տարուան մէկ երկու ներկայա-
ցումներ տալ հայ բանտարկեալներու
օգտին:

Կամքը, վճռողականութիւնն է որ
կը պակսի անոնց:

Թող անոնցմէ համարձակները,
վառվառները առաջ նետուին, զէպի
ձեռնարկը յուսահատներէն խնդրելով
որ զիրենք չի խանգարեն. Թող գոր-
ծին յաջողութեւ կամ չի յաջողելու
մտածումը չի կաշկանդէ զիրենք:
Փորձերը ցցուցին թէ՛ իրենց հետ է՝

ունեւորէն, արհեստաւորէն, Հայաս-
տանի բնակիչներէն բաւական թուով
խուճեր, որոնք զիտեն զիրենք քա-
ջալերել, երբ վստահութիւն ներշն-
չող անունով մը եւ ամէնուն սրտին
մօտ նպատակով մը ու անկեղծ գոր-
ծով մը հրապարակ կելնեն:

Պէտք է համոզուիլ միեւնոյն ա-
տեն, որ ժողովուրդը զժբաղդաբար
դեռ գիտակցութեան այն աստիճանին
վրայ չէ որ ինքնաշնորհաբար նուիրէ
իր լուսման բարենպաստակ գործերու:
Գործ մը պէտք է ընել, որպէս զի իր
լուսման տայ ան ատ գործին, նպա-
տակին տուած ըլլալու համար:

Թո՛ղ համարձակները առաջ նետ-
ուին, թող առնէ երիտասարդութիւ-
նը առաջին գործնական քայլը իր
պարտականութիւնը կատարած ըլլա-
լու համար, իսկ եթէ իր ձեռնարկը չի
քաջալերուի, ամօթը իրը չէ, այլ հա-
սարակութեան որ զինք չի քաջա-
լարեց:

Ու ան ատեն է որ, բացարձակ
իրաւունք պիտի ունենանք անոնց ե-
րեսին պոռալու:

Քարեսիրտ հրէշներ. . .
Հրանդ—Ժիրայր

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն
ԱՌ
Բ Ա Ր Ե Մ Ա Ղ Ո Ղ Ս Ե Կ Ի Հ Ա Ր Ի Բ Ա Մ Ե Ա Յ
Յ Ո Յ Ե Լ Ի Ն Ի
Հ ա ս ս ս ո ս ք ե ս ն Մ խ ի ք ա ր ե ս ն ո խ խ ի խ
— — — — —

Թէպէտ անագան (*) սակայն լի
թաթաղուն սիրով և զգացմամբ
կուզամք յայտնել մեր անկեղծ
շնորհակալեաց հաստատիքը՝ բա-
բեկամաց ջարեօրաց, մանա-
ւանդ հայրենասէր, երախտաճա-
նաչ և խրախուսիչ Աղագայոց, ու-
րոյ իղձն սե բաղձանքն հաւա-
սարեւով մեր անհուն վափաքին
և եռանդեան՝ առ երանաշնորհ
Հայրն մեր Միթիմար, անխափ և

(*) Անշուշա ներդրամիտ պիտի
գտնուին մեր ազնիւ աղագայինք, սոյն
տողերս անագանելուն հատար. վասնզի
հանդիսական աւուրց անմիջապէս յա-
ջողեցին հանգստեան և զիւզագնա-
ցութեան օրերն, որով և Յանձնաժո-
ղովս անգամք ցրուեցան մինչեւ այս
վերջին նիստը:

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

Ս Ա Ք Օ Ն

Գլուխն աջ ձեռքին վրայ, աչքերը
սեւեռած տարածութեան մէջ, միջա-
հասակ, նազնի և մանկամարդ մի-
կին, որ իր մէջ պատկերացնում է
քաղցրութիւն և անձնութիւններու նըս-
տած է պատուհանի առաջ:

Քունը բոլորովին փախել է նրա
աչքերից. տեսնողը անմիջապէս հասկա-
նում է թէ՛ ցաւ մը ճնշում է նրա
սրտին վրայ. հազարուոր մտածումնք,
չուռ են գայիս նրա մտքին մէջ բայց
թէ ի՞նչ է մտածում. նա ինքն էլ

թերեւս չը գիտէ. միայն արձանացած,
անդուլ նայում է դուրսը:

Մի տղամարդու ձեռքի հեշտ զարկը
սթափեցրին նրան իւր թմրութիւնից,
և նա ետ դառնալով, իր գէջը կանդ-
նած գտաւ Սաքօն, բուստէ չրթե-
րին վերայ փայլեց մի սխուր ժպիտ,
և այդ ժպտին մէջ նա ինքը նազօն
այս էր դեռատի կնոջ անունը:

Սաքօն, որ մի բարձրահասակ,
թուխ, խրոխտ երիտասարդ էր,
նստեց իր կնոջ մօտ, դրեց գլուխը
նրա ուսին և սկսեցին խօսակցել:

Բաղբը այնպէս էր բերել, որ Սա-
քօն ստիպուում էր մեկիւրի իր հայրե-
նիքից, բաժնուել իր սիրելիներէից,
նորահարս նազօնից, հազիւ երկու շա-

աննախանձ ոգով հոչակեցին և
փառաւորեցին զնա և անոր հաս-
տատած Միաբանութեան՝ առ
ազգն մատուցած գրական և կըր-
թական երկգարեան գործունէու-
թիւնը:

Այն հանգէսն՝ որ ըստ կարի
այնքան շքեղութեամբ կատար-
ուեցաւ յ'8, 9 և 10 սեպտեմբերի
Ս. Ղազարու կղզեկիրն մէջ ի վե-
նետիկ, առաւել ևս փայլ մ'առաւ
ներկայութեամբ, թէ Սրբազան
Նուիրակայ եկեղեցական Գերա-
գոյն Պետաց Կաթողիկոսաց ազ-
գիս հայոց, և թէ միանգամայն
քաղաքաժողով հասարակութեանց
և զաղթականաց ներկայացուցիչ-
ներով, որոնք ի գիմաց մեծա-
մասնութեան Աղզիս փութացած
էին յայտնել իրենց և համօրէն
ժողովրդեան համակրանքն և
սէրն:— Ուր թողումք այն ամէն
բարեմաղթական հեռագրերն,
նամակներն, օրհնութիւններն,
ուղերձներն և նուէրներն, որոնք
հեռաւոր և մերձաւոր, ծանօթ և
անծանօթ անկիւններէ սեղացին
այդ հանդիսաւոր աւուրց մէջ ի
Ս. Ղազար, ի կողմսնէ արեւելա-
սէր Սրբազան Քահանայապետին
Լեւոն ժԳի, և Խտալիոյ վեհազն
Մայր Թագուհոյ Մարգարիտայի
և ուրիշ պետական անձանց, սըր-
բազան եպիսկոպոսաց և առաջ-
նորդաց, ազգային և օտարազգի
լրագրական, գիտական, կրթա-
կան, բարեգործական և գրական
հաստատութեանց, տեարց և
տիկնայց, գաղթականաց և ամեն
բարեկամաց:

Արդ, որովհետեւ աւելի քան
500 եղան այդպիսիք, և մեզ ան-
կարելի՛ առ իւրաքանչիւրն ա-
ռանձինն գրով պատասխանել՝
արժանաւոր շնորհակալութեամբ,
ուստի ստիպումք փոքրիկ գրու-
թեամբս յայտնել մեր անկեղծ
շնորհակալութիւնը, համակրանքն
և պարտականութիւնը, փոխարէն՝
այնքան աւելի քան զակնկալու-
թիւն մեր ցոյց տրուած մտեր-
մական և աշնուական բացատրու-
թեանց՝ գրով, հեռագրով և որ-
վորքի նիստը:

Պահ մը նրա մտքին մէջ ծագում է
յոյսի նշույլը, հրճում է և ժպտում,
մտածելով թէ՛ մի օր իր նազօնի կրնայ
երջանակացնել:

Բայց իսկոյն սխրում է և արտասա-
ւում է, քանի մտածում է թէ՛ պէտք
է ձգել իւր սիրելիներին, բաժնուել
նազօնից, ունենալով մի յոյս միայն որ
դարձեալ օր մը նա կը տեսնէ զոյն:

Այդ մտածումներէ մէջ Սաքօն յան
կարծ վեր ցատկեց նստած անկից և
դուրս եկաւ: Գեռ տիրում էր գիշերը,
աստղերը պլլում էին կաթնաթոյր
երկինքում, Արուսեակը լողում էր
կապուտ տարածութեան մէջ. նրա
ցոլացումը, հեղաճեմ նազնի յիշեց-
նում էին նազօնի ձեռքը, պարտէզին
մօտ, դրանը սեմին վրայ նստեց նա
յուզուած և արտասուեց, յետոյ շուռ
տալով գլուխը դէպի այն կողմ, ուր

պիտի և է նուէրով և նուիրակօք, չորս ի լրումն հասարակաց ըզձից կը փութամք հրատարակել (՝) առանձին հատորով . որպէսզի այդ երկուստեք բարեսիրական յայտարարութիւնքն անմոռաց մնան յայագային :

Ուրեմն ընդունեցէ՛ք , ո՞վ ազնիւ Ազգայինք մեր , զայս իբրև գրաւակուն մեր երախտագէտ ճանաչման՝ քան զոր աւելի հզօր և հաճոյ համարիմք և մաղթեմք մեր երջանիկ Հօր Մխիթարայ բարեխօսութիւնը և օրհնութիւնը :

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՅՈՐԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԻ
Վեներաբլի Ս. Ղազար , 2 նոյեմբ.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Վասնայի երեսասարդութեան

— 0 —

Ազնիւ պարոններ

Փ. Պոլսէն , Տ. Վահան Մազմանեան մասնիչ կանուանէ Վահան Եահրիման և Լեւոն Սարգիսեան որուն եղբւրթիւնը խոստովանած է բայց տարբեր եղանակաւ , այս վերջինը հարստութի միջոցաւ . երեւոյթը ըստ ինքեան ազտատ է : Ասոր վերջնական որոշումը կը մնայ այն մարմիններուն , որոնց չըզպատկանին երկուսը սակայ մինչեւ այդ որոշումի երեւան գալը , յարմար կը կարծեմ կազմել երիտասարդներէ մի ընկերական յանձնախումբ հրաւիրելու Լեւոն Սարգիսեանը պարզել ինդիքը , ըստ որում մենք երիտասարդութիւնս ալ կարենանք որոշել մեր բունեղիք գիրքի խօսութեան շարք անոր հանդէպ :

(*) Այս նոր հրատարակութեան խորագիրն է՝ ՅԻՇՍԱԿԱՐԱՍՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՅՈՐԹԵԱՆԻ Ի ՎԵՆԵՏԻՆԻ Հարկ կը համարիմք ծանուցանել մեր յարգոյ ընթացողաց , որչայն հրատարակութենէն զոյացած եկամուտը պիտի յատկացուի Մխիթար Արքայի յիշատակին կանգնուելիք արձանին , որուն հիմնարկութիւնը տեղի ունեցաւ սեպտ. 9ին :

Քիչ առաջ նստել էր իւր սիրելի կնոջ հետ միասին , զիտեց այն պատերը , այն պատուհանը , ուսկից շատ անգամներ նայել էին միտին :

Վեր կացաւ նա նստած տեղից և սկսեց վեր ու վար քայլել . առաւօտեան զով հոգիկը , նորարաց ազոթարանը , թուշնիկներէ ճլլըցը , ցողագին ծաղիկներէ բոյրը , վայրկի մը յախտակեցին Սաքօին իր սխուր մասածուններէց . և նա ժպտեց մի անուշ , տղայական ժպտով այն բոլորին , որ իրան ժպտում էին զույգ վերջին անգամ :

Դուրս եկաւ և Սաքօին մայրը . նա , հարցրեց մայրական անկեղծ գորովանքով իւր սիրասուն գաւկին թէ ի՞նչու համար այդքան վաղ զարթել է : Սաքօն չսպաստիտանեց իւր մօրը , միայն մի լուռ հայեացք ձգեց նրա վերայ : Ի՞նչեք

Հարկ կը համարեմ , հրաւիրել և Յարգ . Վարդօն , ներկայ գրտնուիլ կազմուելիք յանձնախումբին մէջ , քանի որ ինքն է եղած առաջին անգամ ինդիքը պարզողը և հրաւիր կարգացողն . թէեւ Յակոբ Գուրպէթեան ալ պիտի հրաւիրէի , սակայն Տ. Յ. Խաչիկեան հարձակութի մէջ հրատարակած նամակով « քանի կը զրկէ այդպիսի խմբերու մէջ ձայն բարձրացնելու իրաւունքէն » :

29.07

ԿԸ ՀԵՐՔՈՒԻ

— 0 —

Անցեալները լուր մը տարածեցաւ որ Ռուսիոյ նախաձեռնութեամբ վեհաժողով մը պիտի կազմուի Պերլինի դաշնագրութիւնը գործադրել տալու համար : Հիմա , Բեթերապուրկէն կիսապաշտօնապէս այս լուրը բուրովին անհիմն կը հռչակուի :

Փորձուածը կրկին փորձելը խենդութիւն է . ուստի ազէկ բան սպասելը , մանաւանդ հայերու համար կատարեալ աղօթյամբութիւն է : Անոյ պէտքը թող իրեն մնայ , միայն թող գէշութիւն չընէ մեզի :

Մեր ուսամուկները Մ. Սթէֆանօյի դաշնագրերը առեր ու կը քալեն : Ռուսիա սանկ պիտի ընէր , եւրոպական պետութիւնները արգելեցին , ևն .

Ռուսիա եթէ չըլլար , 90էն սկսեալ մինչ վերջին օրերս հայկական ինդիքը կարելի է որ պիտի լինեցած ըլլար :

Ս. Սթէֆանօյի դաշնագրի հեղինակին որդոյն և թոռին օրովը հայութիւնը աւելի տանջուեցաւ թաւրքիոյ ճիրաններու մէջ , քան երբ և իցէ : Ու հիմայ ալ կը տանջուի , և զեռ պիտի տանջուի :

Գերմանիա մնայ այնքան արգելք չըլլար որչափ Ռուսիա . և այդ արգելքը բաւանալու համար

չէր բովանդակուի իր մէջ այդ հայեացքը :

Մայրը հեռացաւ . Սաքօն սրբելով արտասուքը , յախտակուած վերագործի և աւելի գեղեցիկ օրերի յուսով , սկսեց հիւսել երազներ :

Բայց կրկին ընկաւ դառն իրականութեան մէջ ու գլուխը տրորելով շնչացւցը պէտք է որ ես տեսնեմ այս դաշտերը , այս վայրերը ուր ամէն ինչ քաղցր է հնչում իմ ականջին . չի պիտի ման գամ հոս իմ նազօին հետ , չը պէտք է որ նստիմ այս քարին վրայ , այն ծառին տակ , այս հեշտալիք վայրերին մէջ . պէտք է զրկուիմ այս բուրբոյնէն , և ի՞նչու . . .

Քանիքուով , մտենումէր բաժանման ահաւոր բողբոջն :

ինչ ալ որ ընենք , որչափ ալ որ ջանանք քծնիլ ռուսին ոտքերուն առջև , արդիւնք մը չի պիտի ունենանք քանի որ Ռուսիոյ գիււանգէտները այնչափ ապուշ են , որ կրնան կարծել թէ՛ ազատ փոքրիկ Հայաստան մը կրնայ իրենց երկրին համար վտանգաւոր ըլլալ :

Սակայն Ռուսիա մեզի հակառակ ըլլալուն համար պէտք չէ որ մենք յուսահատուինք :

Ռուսիա որչափ ուժեղ և որչափ ալ ահագին է , այնչափ ալ ահագին են , անոր ներքին վերքերը , մեծ են և արտաքին թըշնամիները զօրաւոր ու վտանգաւոր : Անորալ թուլնալու ժամը պիտի հնչէ . գոնէ առժամապէս թուլնալու ժամը :

էն .

ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Կիւիկիոյ ընտրողական ժողովը արդէն վեց եպիսկոպոսներ ընտրած է կաթողիկոսական թեկնածու :

Այդ վեց հոգիին մէջ չըկան բացարձակապէս թրքամոլ եպիսկոպոսներ , իսկ Օրմանեան ալ առանձին քիչ քուէն ստացեր է :

Ինչպէս կերելի կիւիկիոյ ընտրողներըլաւ մը հասկցեր են գալիք փորձանքները , եթէ բուրբովին անպիտան եպիսկոպոս ընտրուէր : Թեկնածուներուն մէջ կան Սաահակ եպիսկոպոս Խաչատրեան , Մանկուսի և Հմայեակ շատ հաւանական է որ Սուլթանը այդ երեք անուններն ալ ջնջէ և միւս երեքը յանձնարարէ անոնցմէ մին ընտրելու համար :

Այդ երեքը հետևանքներ են . Երիցեան , Կիրակոս և Օրմանեան եպիսկոպոսները :

Վերջապէս , ըստ երեւոյթին այդ անվերջանալի ինդիքը բուրբովին լուծուելուն մօտիկ կերելի , եթէ Համիտ նոր օյիններ

Արիւր ծագելուն հազիւ կէս ժամ էր մնում , պէտք էր բաժնուել : Դեռ Սաքօն այս մտածումներէ մէջ էր խորխորում , երբ չորս այլ երիտասարդներ ձայն տուին իրան , իսկ նա առանձ պատասխանելու ուղղուեցաւ գէպի տնակը :

Սենեկին դուռը բանալիո նա սկսեց զողջողալ բայց վայրկեանները թըշուում էին , պէտք էր սալ վերջին հրաժեշտը և հեռանալ :

Սաքօն ներս մտնելով՝ դեռ նազօին լուսամտին մօտ նստած գտաւ . իսկ մայրը անկիւն մը նստած լաց էր լինում լուկ , երբ ազան տեսաւ խեղճ մայրը սկսեց եկեկալ . նազօն մնաց լուռ :

— Մայր , տուր ինձ իմ մախաղը և ցուպը բնկերներս ինձ սպասում նե :

չը խաղայ իր ամենասիրելի եպիսկոպոսները չընտրուած ըլլալուն պատճառով :

Օրմանեան շատ ճիգեր թափեց որ ինք ընտրուի , և հիմա ամենէն քիչ քուէն ընդունած է : ատ իրեն համար փառաւոր ապուսակ մըն է . իսկ եթէ բուրբովին ցանկի մէջ չը մտնար , աւելի լաւ պիտի ըլլար :

Կը մաղթենք սր Սուլթանի խելքին հով մը փչէ , որ ան ցանկի մէջէն կիւիկիոյ համար ամենէն օգտակար եպիսկոպոսները որոշէ : Կը մաղթենք , բայց չենք հաւատար , որովհետեւ անոր գլխուն մէջ դարձած հովերը միշտ գարշելիութիւն կը արտաբուրեն :

Ն Ս Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Անձեալ անգամուան որբախնամին շնորհակալութեան մէջ , Տ. Սիմօն Մարինեանի համար տպուած էր ատենակետ , փոխանակ «վասն ատենակետի» :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հոկտեմբեր 28 ին . Պոլսոյ մէջ տեղի ունեցեր Պէրպէրեան վարժարանին Յորեքանի հանդէսը :

Բազմաթիւ շնորհաւորական նամակներ ու հեռագրներ ստացուեր են , ու շատ ճանոր արտասուանուեր են :

Յունաց պատրիարքին կողմանէ ալ ներկայացուցիչ դատուեր է և յունարէն լեզուով պատրիարքին օրհնութիւնը հաղորդեր է Պէրպէրեանի :

Պէրպէրեան ինքը ատենախօսելով հայտարարեր է որ Յորեքանին առթիւ հաւաքուեր է 1098 ոսկի , որմէ 100ը կը նուիրէ ուսուցչած օգնութեան սնտուկին 30ը վտանայ էրամեան վարժարանին , 20 Մամուրեանի յիշատակին համար կանգնուելիք արձանին և 5 որբերու որդեգրումը կատարած է շարունակաբար իրեն ներուած գումարին տոկոսին ի հաշիւ : Որեմն Տ. Պէրպէրեան իրեն նուիրումը գրամին մէկ հինգերորդ մասը կը նուիրէ հանրային օգտակար հիմնարկութիւնները :

Կարծես այս խոսքերը զարթեցրին նազօին իւր թմրութիւնից , նա խըզ դուկ ճիչ մը արձակելով սանց :

— Կը թողնե՞ս գիտ , Սաքօ-ու նետուեցաւ անոր վզին :

Մայրը բերեց Սաքօին մախաղը և ցուպը ու տալով , արտասուալից աւելացրեց :

— Զաւակս , սպասեմ պիտի մինչև բու վերադարձը :

Սաքօն արդէն բաւական հեռացել էր հայրական անշուք տնակից , իսկ նազօն վշտահար նստաց լուսամտին մօտ , տակաւին կանչում էր :

— Զիմուանաս ինձ Սաքօ .

(Շարունակելի)

Կը շնորհաւորենք Պէրպէրեանը որ այդ քայլովը օրինակ դարձեր է ապագայ Յորելեարներու :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Յրանսական նաւատորմի շարքէն Միտիլին կղզիէն հեռացեր է, որովհետեւ թուրքի հետ ունեցած վէճը վեջացած կը համարուի :

Գիւստինիական կանոնաւոր յարաբերութենները արդէն սկիզբ առնելու պետութեանց միջեւ :

Պ. Բօնսթան շուտով Պոլիս պիտի վերադառնայ :

Էրզրումի մէջ մեծ երկրաշարժ տեղի ունեցեր է, բնակիչները չը նայելով ձիւնին դուրս թափեր են, մարգոց վնաս չէ պատահեր :

Յրանսական գործակատար Բապտիստ առաջին պաշտօնական այցելութիւնը տուած է Բ. Իրան :

Էրզրումի մէջ երկրաշարժը կրկնուեր է, շատ տուներ քանդուեր են և մի քանի մարդ ալ վընասուեր է :

Թուրքիոյ մեծ վէզիր Բիֆատ փաշան մեռեր է :

Հոռմի պապը շատ գոհ մնացեր է որ Ֆրանսական կառավարութիւնը պահանջեր է գաղղէացիներու պատրիարքին հաստատումը :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինու արքունիկը ճանկայ պիտի մնայ մինչեւ նոյեմբեր 20 :

Չինու կառավարութիւնը մերժած ըլլալով Մանչուրիոյ մտաին Լի—Հունկ—Չանկի պատրաստած դաշնագիրը, բանակցութիւնները դադարեցնելու է :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պօէր պատուիրակները Հէլլէրսուտի մէջ երկար խորհրդակցութիւն մը ունեցեր են Գրիւկէրի հետ :

Անգլիական նախարարները թրանսվալի մասին երկու կուսակցութեան բաժնուեր են. մէկ գլուխ ունենալով Չէմպըրլինը կուզէ պատերազմը շարունակել, մինչեւ որ Պօէրները անպայման կերպով անձնատուր ըլլան, իսկ միւսը, ելմտից նախարարը գլուխ ունենալով, կուզէ հաշտութեան բանակցութիւնները վերսկսել :

Թրանսվալի Եւրոպիոյ գործ-

ծակատար Լէյտս և պատգամաւոր Ֆիլէր Պէրլին գացած են : Վերջերս Գերմանիոյ կրթութեան գաւազանը մեծ ցոյցեր կընէ Անգլիոյ դէմ, ուստի Լէյտս կը յուսայ որ կրնայ Գերմանիոյ մէջ Պօէրներու ի նպաստ բան մը ընել :

Ա Ն Գ Լ Ի Ա

Լօրս Սալպէրի ճառ մը արտասաներ է, որին մէջ յայտարարեր է թէ անգլիական բանակը արագարար յառաջ կը խաղայ Թրանսվալի մէջ :

Պօէրներու Պէրլինյան կի քով տալած վերջին յաղթութիւնը շատ գէշ ազդած է Լօնտօնցիներու վրայ :

Փողովուրդին մէջ լուր տարածուէր է որ կառավարութիւնը սնանկալու վրայ է և մտադիր է պատերազմը համար ծախսել փոստային խնայողական գրամարկներու մէջ գտնուած փողովրդեան դրամները :

Ուէլսի մէջ այդ լուրը տարածուելուն պէս փողովուրդը իսկոյն դրամարկներէն ետ առեր է 500,000 շէլլինկ :

Կ Ր Ե Տ Է

Մեծ պետութիւնները պնդած են որ Կէորկիոս իշխանը շարունակէ հետեւեալ եռամեակին ալ կղզիին չկառավարիլ մնալ :

Կրէտէի խնդիրը վերջնապէս կարգադրութեան լուրերը կանխահաս են :

Յայն թերթերը կը հաղորդեն որ պետութիւններու Կէորկիոս իշխանին ըրած զիջումներէն մին ալ ան է որ միջազգային դօրքին յունական դօրք պիտի փոխարինէ :

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Կուուի թէ Բօնսթան Պոլիս վերադառնալէն յետոյ ինքը պիտի հրաժարի գեսպանական պաշտօնէն որովհետեւ արդէն առաջ տրամադրէր գործօն դէր խաղալ Յրանսայի քաղաքական կեանքին մէջ : Այնպէս որ անոր հրաժարելուն պատճառը ֆրանս—թրքական վէճը չի պիտի ըլլայ :


Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Կօրնիա Պանիա կայարանին քով երկու կառավարութեան իրաւունք հանդիպելով ուժգին ընդհարում մը տեղի ունեցեր է, Բաւական մարդիկ վիրաւորուեր և մեռեր են :

Երեսփոխանական ժողովին մէջ հարցապնդում եղեր է այդ մասին և մատնացոյց եղեր են երկաթուղիին շատ մը պակասութիւնները :

Իշխանը նախարարացեալին նամակով մը իր ցաւը յայտնեց ի պատահած դժբաղդութեան մասին :

Մ . Ե Ր Ա Ն Ո Ս Ե Ա Ն



Կոշիկահարի խաւնոք Չար Պորիս փողոց աղջկանց վարձարանին կից

Կը պատրաստուին եւ կը գանուին պատրաստ մէնտեսակ եւրոպական ճաշակաւ կօշիկներ էրիկ մարդու կանանց եւ տղայոց համար. ապրանք գիմացկուն, գիններ խիստ շափաւոր : Առաջին գիմողը արդէն պիտի համոզուի :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայդելբերգում հիմնուել է մի գրադարան, որ նպատակ է դրել ծանօթացնել արտասահմանի հայ ուսանողութեան եւ ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ : Գրադարանը ունի յիշալ նպատակով հրատարակած գրքերի մի համաստիւթի որի համար յայտնուած ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հաստատութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ նւիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով :

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ԽՄԱՆԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, համակազմութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ :

Գիները յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՉԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է գրիմել հետեւեալ հասցէով : Խնիսն sk 2 Էդիսթան Արմ. Լ'հորս րիս սր Լ'էֆօլ սր Շիւֆի 2

Սուխ Ժընէվ Կարգոյի Գանձնատնոյ

Ա. Զ. Դ

Սիլիոգրի ազգային արական վարժարանի համար կուզուի վըկայեալ ուսուցիչ մը որ կարող ըլլայ աւանդելու հայերէնէ ու ֆրանսերէնէ զատ նաեւ երկրորդական գիտելիքներ. փափաքողք բանակցութեան համար թող բարեհաճին գրիմել տեղւոյն ազգային վարժարանին հոգաբարձութեան :

Ա. Զ. Դ

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրդաի գիւղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակալ շէկ պէլով ու յօնքերով, 6 ամիսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը չմխիթարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով :

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Sof. v. Snsnitskij և Ե. Թոփչևալցի «Die sozial-ökonomisch Türcei» Հատարական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս Եւրոպայի մասին : Գինը 2 մարկ ճանապարհածախսով դիմել : Berlin, Verlagshandlung R. Prager, № W. 7

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ. Կ. ՊՕՆՃՈՒԲԵԱՆԻ Եւրոպայի քաղաքացիական պատերազմի (պատկերազարդ) Առաջին տարի (Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած) Գին 70 Սնթ. Կը ծախուի Վատնայ Մ. Գայրակեանի քով :

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна